

ԼԵԶՎԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ
ԳԼՈՒԲԱԼ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Բանալի բառեր՝ սոցիալ-հումանիտար գիտություններ, լեզվական գիտակցություն, գիտական հաղորդակցում, բազմալեզվություն, թարգմանություն, տեղայնացում, լեզվական քաղաքականություն:

Keywords: social sciences and humanities, linguistic awareness, scholarly communication, multilingualism, translation, localization, language policy.

Գիտական հաղորդակցության պատմաքաղաքական համայնապատկերը և խնդիրները

Համացանցի և թվային տեխնոլոգիաների զարգացումը ավելի քան երբևէ, լեզուների և մշակույթների, այդ թվում՝ գիտական մտածելակերպի գլոբալ բազմազանությունը պահպանելու կարիք ունի: Սա նաև պետական հրամայական է, քանի որ պետականությունն ինքնին խարսխված է լեզվական և գիտական ինքնությանը, այդ ինքնությունը գլոբալ հաղորդակցության ազդեցությունների միջավայրում չկորցնելու, ներկայացնելու և մասնակցելու կարողունակությանը: Գիտական հաղորդակցության հայեցակարգ ձևավորելու նպատակով կարևոր է հասկանալ արդի միջազգային լեզվական քաղաքականության զարգացումները, դրա համակարգային, պատմաքաղաքական և գործարար-էթիկական հարացույցների կիզակետում ուրվագծել հայ գիտական մտքի և հաղորդակցության լեզվական քաղաքականության նկարագիրը:

Գիտական մտածողությունը բնութագրվում է որպես առարկայական՝ ինչպես խոսքային ակտը, ռացիոնալ՝ ինչպես լեզվի տրամաբանությունը, պահպանելի ու փոխանցելի, նաև կրկնելի և կիրառելի, ինչպես նյութականացած՝ ձայնային-բանավոր կամ տեսողական-գրավոր մշակման ենթակա խոսքը: Համագիտական բառապաշարից բացի, յուրաքանչյուր առանձին գիտակարգ ունի իր լեզուն, որն էլ նպաստում և ձևավորում է տվյալ գիտության խոսույթային միջավայրը, դրա առարկայական և ստորոգական հասկացություններն ու հարաբերությունները: Որպես այդպիսին, այն նույնպես ձգտում է հետևել գիտաչափական իմաստակառուցվածքային նորմերին, ոճի և շարադրման ներքին կանոնների, ունի նվազագույն եղանակավորիչ գծեր, և տեսականորեն համամարդկային է, կամ ձգտում է լինել այդպիսին՝ միջազգային միասնական չափական և հասկացական համակարգերին համահունչ: Այսպիսով, գիտաչափական նորմավորման շնորհիվ գիտությունը մնում է լեզվի ամենա գիտակցված դրսևորման տեսակը, տվյալ լեզվամշակույթի և ժողովրդի, պետության ամենից կուռ ու համակարգային մտքի ներկայացուցիչը, իսկ լեզուն՝ գիտության համամարդկային տարածման և իրականացման գործիքը:

Սակայն լեզուն ինքը, որպես գիտության օբյեկտ, իր հնարավորություններով գերազանցում է ռացիոնալ տրամաբանական կամ գծային մտքի սահմանները: Պոետիկական և գրական արձակի ժանրերը, նաև հրապարակային խոսքի նմուշները վկայում են բնական լեզվի մեկ այլ հատկություն ևս. ենթագիտակցական տեղեկության, չգիտակցված վերաբերմունքի [Nuyts, 2001], լիովին չհասկացված զգայական պատկերների, գնահատողական ուղորդման և վերջապես, հիշողության արժեքաբանական շերտերի ակտիվացման և ընդհակառակը ապակենտրոնացման հնարավորությունը, ոչ դիսկրետ խառը կատեգորիաներով [Pierce, 1977] և չամբողջացած հասկացություններով հաղորդակցություն իրականացնելու ներուժը [Fessler & Machery, 2012], որը, ոչ միայն տալիս է տվյալ լեզվագիտակից միավորի նկարագիրը, այլև տալիս է դրա հիման վրա ներգործման հնարներ մշակելու հնարավորություն: Իսկ այդպիսի գործաբանությունը, արդեն հրաշալի գիտենք հիբրիդային պատերազմների և սոցիալական ինժինեռիայի օրինակով,

ռազմավարական նշանակություն ունի: Ներգործման մեխանիզմներ մոդելավորելու համար անհրաժեշտ է տվյալներ ունենալ հանրամշակութային միավորի սուբյեկտիվությունը բնութագրող գործոնների մասին: Այդ բաղադրիչների մեծ մասը կրում է լեզվամշակութային թավ գույներ, դրանք պատմականորեն սուբյեկտիվ են, սովորաբար, հասցեագրված են ներքին լսարանի և տարբերակված են ներքին իրադրություններով, անմիջականորեն ազդեցիկ են և դրսից դժվար կառավարելի: Դրանք ամրագրված են լեզվի տարամակարդակ նշաններում և համապատասխան մեթոդաբանության առկայության պարագայում, ենթակա են ինչպես վերլուծական հայտածման, այնպես էլ մոդելավորման և վերարտադրման: Գիտական ճանաչողության համար առավել նշանակալից օբյեկտ, քան գիտության խոսքն է, որն այդքան մեծ նշանակություն ունենա մարդկային քաղաքակրթության համար, այսօր թերևս դժվար է պատկերացնել:

Դասական լեզվաբանությունից հազարամյակների ընթացքում բազմաթիվ միջգիտակարգեր են ընձյուղվել՝ լեզվի փիլիսոփայությունից մինչև լեզվի նյարդաբանախոսություն, ապա, նաև որպես մասնագիտական հաղորդակցության՝ բժշկական, գործարար, օդային ու ռազմական հաղորդակցության, դատական քննական և այլ ոլորտներ: XXI դարում, մարդկային մտքի մոդելավորման լավագույն նյութը ստացվում է բնական լեզվից. դրա արհեստական վերարտադրման պահանջով խոսվող լեզուն՝ տեքստերը վերածվել են նշանային հումքի՝ խոսքային միավորների տրոհված, պիտակավորված և լավ նկարագրված շտեմարանների տեսքով: Կորպուսները և դրանցում ամրագրված հարաբերությունների ցանցերը որպես տվյալներ դիտարկելը հնարավորություն ընձեռեց աշխատել արհեստական լեզվական մտածողության կաղապարներ ստեղծելու վրա: Այսինքն, լեզուն ունի մտավոր և առարկայական գործողությունների առկայացման բազմաչափ գործիքակազմ, ա. ստեղծում է խոսույթային ասպարեզ՝ սահմանելով գիտության յոթ չափումների ծավալները, և գերազանցում է դրանք այնպիսի հնարավորություններով, ինչպիսիք են բ. սինկրետիկ լեզվամտածողությունը, գ. հուզական արտահայտչամիջոցները, դ. գնահատողական վերաբերությունը, ե. կատարողական գործառույթը, զ. հարացուցային սուբյեկտայնությունը և է. շարակարգային օբյեկտիվիզմը: Բնական լեզուն, ինքնին համապարփակ լինելով, հնարավորություն է տալիս գիտության մի ոլորտից դեպի մյուսը արտակայել հասկացություններ, հետազոտության արդյունքներ և վարկածներ, ձևավորել ունիվերսալ գիտական համակարգեր՝ իրենց կատեգորիաներով և, երբեմն փոխաբերված, հասկացություններով, որոնց վրա էլ կառուցվում են միջգիտակարգերն ու տարատեսակ լեզվական մոդելները: Լեզվական մտածողության մեջ, օրինակ, հիմնարար է «իմաստ և նշանակություն» հակադրամիասնությունը, որոնք միավորում են առնվազն երեք՝ հոգեբանություն, լեզվաբանություն, մաթեմատիկա գիտակարգերը [Հովհաննիսյան, Ղազարյան, 2003]: Գիտության համակարգային մտածողությանը նպաստում են այնպիսի լեզվաճանաչողական և լեզվառճական գործառույթներ, ինչպիսիք են փոխաբերումը, փոխանվանումը, համեմատությունները, զուգահեռումը, թարգմանությունն ու հավասարեցումը:

Գիտնականները, ինչպես և հազարամյակներ առաջ, այսօր էլ բնական լեզվից ավելի ճկուն միջոց չունեն իրենց գաղափարները շարադրելու, կիսելու, նախագծերի շուրջ համագործակցելու համար: Թեև առաջինը անգլերենն է դարձել այն ինժինեռական գործիքը, որով մարդը փորձեց վերարտադրել մտածողությունը և միջազգային գիտական մտքի ինստիտուցիոնալ վերահսկողությունն այսօր ևս անգլերենին է պատկանում, այդ իշխանությունը ընդամենը մի քանի տասնամյակի պատմություն ունի:

Ի սկզբանե, գիտական տեքստերը լեզվամշակութային տարբերակում ունեին գիտության տեղային բնույթի և անհատական գրչության շնորհիվ²: Բացի այդ, տարբեր երկրներում և

² Տարբեր գրավոր մշակույթներում գիտելիքի շարադրանքի ժանրային և լեզվառճական տարբերություններն առկա են բնագիտական, փիլիսոփայական կամ առողջապահական ու իրավակարգավորիչ այնպիսի աշխատություններում, ինչպիսիք են օրինակ, Դատաստանագիրքը, Պանչատանտրան, Մեռյալների գիրքը, Ավետան, կամ թեկուզ Պլատոնի Պոլիտիկան: Դրան բնության, հասարակության և էթիկայի մասին գիտելիքի շտեմարաններ են: Այս տարբերակման արդի օրինակներից

մշակույթներում գիտության ճյուղերի զարգացումը պայմանավորված էր բնակլիմայական, առարկայական և գործնական գերակայություններով: Տեղերում ձևավորվեցին նաև լեզվական մտածողության ոլորտային առանձնահատկությունները, դրանց համապատասխան ժանրերն ու բառամթերքները:

Տպագրության ներդրման շնորհիվ անհրաժեշտություն դարձավ նախ լեզվական միասնականացումը, ապա նաև գիտելիքի միջազգայնացումը: XVII դարում պաշտոնական գիտության ծագումը գիտական հաղորդակցության շրջադարձային կետերից էր: Տպագրության գյուտով սկիզբ դրվեց լեզվի արդյունաբերացմանը, հաղորդակցությունը դարձնելով ապրանք: Ապա, ամենից էժան և արագ տարածվող ապրանքատեսակին՝ լրատվությանը միացավ խոսքի գեղարվեստը, ապա նաև՝ կրթությունը: Տպագիր հաղորդակցությունը եվրոպական համալսարաններում և գիտական ընկերություններում դրեց նաև գիտության միջազգայնացման սկիզբը:

Գիտության միասնականացումը մի նոր դիալեկտիկական փուլ մտավ մեքենայական թարգմանության շնորհիվ: Լեզվի նեյրոնալ ցանցերի զարգացման հետ և խոշոչ լեզվական մոդելներից ընձյուղվեց թվային թարգմանաբանությունը՝ նշանագիտական և միջլեզվամշակութային համարժեքության հարցականի տակ դնելով գիտաչափական, առաջին հայացքից՝ հստակ չափանիշները:

Գիտական հաղորդակցության ոլորտը կարելի է դիտարկել երեք պատմական հարացույցներում. առաջինը գիտության հաղորդակցում գիտնականների համար՝ թագավորական գիտական ընկերությունների, ակադեմիաների, լաբորատորիաների ստեղծումը, ապա նաև ժամանակակից մասնագիտական հրատարակումներն ու նեղ նախագծային խմբերի ստեղծումը: Երկրորդը գիտության մասսայականացումն է հասարակության լայն շերտերի իրազեկման համար, ներառյալ կրթական նպատակները: Վերջապես, գիտություն արդյունաբերողների, ինժինեռների և մեթոդիստների՝ այն օգտաբեր արտադրանքի վերածողների և կիրառության մեջ ներդրողների համար: Այս մասնագետները գիտելիքը հասցնում են շահառուին արդեն կյանքի որակ բարելավող սպառման առարկաների, հմտությունների կամ ծառայությունների տեսքով:

«Գիտություն գիտնականների համար» կամ բուն գիտական հաղորդակցումը սկսվեց դրա միջազգայնացումից, որն իր հերթին թոնիչքային զարգացում ապրեց տպագրության տարածման և արդյունաբերական հեղափոխության շնորհիվ: Դրա առաջին ակիքն առաջ մղեց երեք եվրոպական լեզուները՝ ֆրանսերենն ու իսպաներենը՝ անգլերենի գլխավորությամբ: Աշխարհի տնտեսական գաղութացումը նպաստեց հենց այս լեզուների տարածմանը:

Ամենամեծ գաղութային լեզվատարածքը դառնալով, անգլերենը արագորեն ենթարկվեց ներքին երկատման: Բրիտանական թագի առաջին և ամենամեծ գաղութում՝ Հյուսիսային Ամերիկայում, անգլախոս նահանգների անկախացման խորհրդանիշներից մեկը դարձավ ամերիկյան անգլերենը. այն հոչակվեց որպես առանձին գրանցված լեզվական համակարգ՝ Ն. Վեբստերի բառարանով և Ս. Հյուսթընի քերականության գրքով: Մա փաստացի վկայությունն էր Ջ. Վաշինգթոնի և Բ. Ֆրանկլինի կողմից լեզվի, որպես խոսքային ինքնություն հոչակող ռազմավարական՝ պետականակերտ նշանակության մասին [Kretzschmar & Meyer, 2012]: Իսկ XX դարի վերջերին տնտեսական գաղութարարությանը փոխարինելու եկավ մեկ այլ՝ ավելի նուրբ ու բազմանշանակ վերահսկողություն. սկզբում գիտության և մտավոր աշխատաշուկայում միջազգային լեզվի իմացության նորմավորված պահանջների՝ TOEFL և IELTS թեստավորման

է բժշկական հաղորդակցումը, որի հանրահասանելի տեքստերը միջազգայնացնող թարգմանչական կազմակերպությունները դրանք ենթարկում են բազմակի՝ իմաստաբանական, կիրառական արժևորման, որպեսզի ստացված արդյունքը տարբեր լեզվամշակույթների ներկայացուցիչների համար ապահովի ըմբռնման միանշանակ և լիարժեք հաղորդակցության մակարդակ: Ժամանակակից գիտության մեջ այս հարցով սկսեց զբաղվել էվոյուցիոն լեզվաբանության գրավոր համեմատական դիսկուրսի ճյուղը, որը մեծապես փոփոխում է գիտաչափական արդի պատկերացումները՝ օրեցօր ավելացող լեզվական սովյալների և ուսուցման կաղապարների շնորհիվ:

համակարգերի, ապա՝ գիտական մտքի միջազգայնացումը հրատարակչական ստանդարտներով կառավարելու միջոցով [Scientific Publishing Has a Language Problem, 2023]: Միջազգային հեղինակությունը գիտնականների համար դարձավ թարգմանվելու, անգլերենով գիտական արտադրանք տալու այն խայծը, որով հնարավոր դարձավ ամբողջ աշխարհից հավաքել լավագույն ուղեղներն ու առանց թարգմանության համար վճարելու և խիստ նորմավորված պահանջներով ստանալ գիտական լավագույն մտքերը: Այդ պահանջներն իրենց ձևական կողմով երբեմն ծայրահեղության են հասնում: Օրինակ, փորձեր են արվում սոցիալ-հումանիտար ոլորտի գիտական հոդվածներին կառուցվածքային միասնականություն թելադրել, անգամ այնպիսի դեպքերում, երբ թեման այլ կառուցվածք է ենթադրում: Ենթադրաբար, այդպիսի կառուցվածքային պահանջները որոշակի նպատակ են հետապնդում, որոնցից կարող է լինել գիտական տեղեկատվության և արտադրության կենտրոնացումը:

Գիտության լեզուն իբրև միջազգային ազդեցության վերաբաշխման միջոց

Գիտության և լեզվի գաղութացումը նեոգաղութային դարաշրջանի կենտրոնական գործոնն է: Փիլիսոփայության մեջ նեոգաղութային է կոչվում այն դարաշրջանը, որտեղ վերահսկողությունը և շահագործումը իրականացվում է անուղղակի, նուրբ կամ ոչ պաշտոնական կամ կանոնակարգով քողարկված ձևով, որն իրականացվում է հաճախ տնտեսական կամ ռազմավարական նպատակներով: Բացի տնտեսական և քաղաքական կախումը, ռազմական ու ռազմավարական հսկողությունը, բնական ու մարդկային ռեսուրսների արտահանումը, գաղութացումն իրականացվում է լեզվական, լրատվական և կրթամշակութային ազդեցության գործիքներով: Բնականաբար, սրանց թվում է նաև գիտական մտքի գաղութացումը, որի համար գործիքներ են ծառայում տարբեր ստանդարտների սահմանումը գիտական արտադրանքի ընդունման, տարածման և ֆինանսավորման վրա: Մյուս կողմից, գլոբալ հաղորդակցումն օբյեկտիվորեն պահանջում է որոշակի լեզվական ընդհանրություն, որի համար պայքարում են մեծ և միջին ազդեցություն ունեցող լեզուները: Դրա վառ օրինակներից է Հայաստանում ռուսերենի ազդեցության նվազումն ու անգլերենի և ֆրանսերենի դերերի բարձրացումը սոցիալական տարբեր միջավայրերում: Նման այլ օրինակներ ևս կան աշխարհում. օրինակ, Ալժիրում 2022 թ.-ից սկսած անգլերենը տարրական դպրոցում երկրորդ պարտադիր ուսուցման լեզուն է [Belmihoub, 2018]: 2008 թվականին, հանուն երկրի քաղաքական և տնտեսական կայուն զարգացման Ռուանդան լեզվական քաղաքականության շրջադարձ արեց ֆրանսերենից դեպի անգլերենը, որպեսզի հաղթահարի Բելգիայի և Ֆրանսիայի հետ պատմականորեն ձևավորված գաղութային մշակույթը [Kayigema & Mutasa, 2017]: Լեզվի պարտադրումը ուղղակի տնտեսական առավելություններ է ստեղծում տիրապետող խավի համար հանգեցնելով տեղական ավանդույթների, պատմության, խոսքային շփման և գիտելիքների արտամղմանը, կրթության բնագավառում խտրականության չգրված օրենքների, որոնք ուղղակիորեն կամ անուղղակի կերպով արմատախիլ են անում մայրենիով մտածելու և ստեղծագործելու, սեփական ինքնությունն արժևորելու հնարավորությունը:

Ներկայում բարձրակարգ գիտական ամսագրերի մեծամասնությունը հրատարակվում է անգլերենով, մի բան, որ գիտելիքի արտադրությունը կենտրոնացնում է անգլախոս երկրներում, դրանից բխող մի շարք հետևանքներով հանդերձ [Ammon, 2001]: Նախ, աշխարհի ողջ լավագույն գիտելիքն առանց մեծ ջանքերի և ստանդարտացված ձևաչափերով մատուցվում է անգլախոս երկրներին: Բացի այդ, ճնշվում են տեղի լեզուներով կատարվող կարևոր հետազոտությունները, կամ, գրված լինելով անգլերեն, դրանք չեն հասնում իրական շահառուներին: Այստեղից էլ սկիզբ են առնում տեղական հետազոտությունների ֆինանսավորման և տեսանելիության մրցակցությունը միջազգային ասպարեզում և բնատուր տաղանդների տեղերում աշխատելու հնարավորությունների անկումը՝ միջազգային, և ըստ էության, լեզվական վարկանիշի նվազման հետևանքով: Տեղաբնիկ գիտնականների համար անգլերեն թարգմանությունները թանկ են և ժամանակատար, և անգամ մեքենայական լուծումների պարագայում, դրանք կարող են որակապես չբավարարել համարժեքության պահանջներին: Դրան գումարվում է անգլալեզու

գիտական ստանդարտը, որը թելադրում է գիտական արտադրանքի և բարձրագույն կրթության նորմերը:

Այսպիսով, գիտական հաղորդակցության զարգացման միտումներն այսօր բացահայտում են լեզվի նոր՝ գործառույթներ. լեզուն դառնում է փափուկ ճնշման զինատեսակ, որը ներթափանցում է միջանձնային մակարդակից մինչև քաղաքական ուղղություններ, տնտեսական հզոր ներգործություն ու հեղափոխություններ, ներառյալ՝ գաղութացումն ու բնաջնջումը: Մերօրյա հիբրիդային պատերազմներն ավելի քան հստակորեն բացահայտեցին լեզվի մասսայական ներգործության, ճնշող և զսպող դերերը: Զարմանալի չէ, որ գիտական մտքի և խոսքի վերահսկողությունն ու կառավարումը, լինելով մշակութային պատերազմի կենտրոնական թիրախներից, իրականացվում է հիբրիդային զինատեսակների տևական ու հետևողական ազդեցությամբ: Դրանց դեմ, հատկապես փոքր ռեսուրս ունեցող լեզուներն ու պետությունները կարող են պայքարել, եթե մշակեն ու իրականացնեն բազմազանության պահպանության իրենց հայեցակերպն ու քաղաքական ծրագիրը: Սա ամեննին չի կարելի անջատողականություն պիտակել, քանի որ ինքնությունը մարդկության անքակտելի իրավունքներից է:

Այստեղ գիտության բնական լեզուների բազմազանությունը չի կարելի շփոթել գիտական հասկացությունների միասնականացման առաջադեմ անհրաժեշտության հետ: Վերջինս ծագել է դեռևս XVIII դարից՝ գիտական հաղորդակցության աճող ծավալների կուտակման արդյունքում: Գուտենբերգի գրատպության գյուտը պայթյունային ազդեցություն ունեցավ գիտական հաղորդակցման ոլորտում. գիտահեն արդյունաբերության տարածումը պահանջում էր գիտական տվյալների, դրանց չափման միավորների միասնականացում և միջազգային ստանդարտներ ու տերմինաբանական բառարաններ: հիմնադրվեց Չափուկշոյի միջազգային գրասենյակը (BIPM կամ IBWM), որի թողարկած տեղեկագրերով առաջնորդվում են բնական գիտությունները: Մեր օրերում գիտական հասկացությունների միասնականացման ձգտումներ են դրսևորում նաև սոցիալ-հումանիտար գիտությունները, որոնք փորձում են թվային միջոցներով բարձր ճշգրտության տարժամանակյա մարդաբանական տեղեկություններ հավաքել կոնկրետ աշխարհագրական տեղանքների մասին³: Նման մեծամասշտաբ նախագծերը, ԲԼՄ մոդելների շնորհիվ, թվայնացնում են մշակութային առարկաներ, մշակում են մարդաբանական գիտելիքի պարզ-ընդհանրական համակարգեր և հանրահասանելի ցանցեր ու տերմինաբանական բառարաններ են թողարկում: Մեծ թափով զարգանում է նոր միջգիտակարգ՝ թվային հումանիտար գիտությունները, բազմապատկվում են միջազգային հասարակագիտական միջոցառումները և համապատասխան միջազգային կազմակերպությունները: Ի տարբերություն բնական գիտությունների, սոցիալական գիտությունների միասնականացումը ոչ միայն ակնառու է դարձնում, այլև պաշտոնապես բարձրացնում է գիտության լեզվական բազմազանության հարցը, քանի որ որևէ մենատիրություն, ներառյալ լեզվականը, այն էլ գիտական արտադրանքի ոլորտում, չի կարող նպաստել այդ ոլորտի կայուն և ներդաշնակ զարգացմանը: Անգլերենի գիտական «լեզվաբանական մենատիրության» [Salomone, 2024] մասին բազում հրապարակումներ կան, ինչպիսիք են օրինակներ են Գրանթթի, Բոդի, աշխատությունները, և դրանց հակադրվող՝ Գորդին-Բաբելի, Նիդհամի, Չեմլայի [Crystal, 2003] և այլ հոդվածները [Giles & Johnson, 1987]:

Լեզվական բազմազանության կորստի ռիսկերը

Աշխարհին արդեն հայտնի են տեղաբնիկ լեզուների կորստյան բազում դեպքեր: Դրանք բոլորը կապված են մշակութային ինքնության և գիտելիքի քայքայման հետ: Նավահո ժողովրդի լեզուն բարդ գիտելիք է պարունակում հողի, բուսական և կենդանական աշխարհի մասին, որն անկրկնելի է և միայն այդ ժողովրդի ապրելակերպին, այդ տեղանքին հատուկ: Տեղաբնիկ գիտելիքի կորուստը հանգեցրեց բնապահպանական աղետի [An Ecological Approach to Indigenous

³ Տե՛ս <https://www.timemachine.eu>.

Language Renewal, n.d.): Ավստրալական աբորիգենների ավելի քան 100 լեզու անհետացել է վերջին երկու հարյուրամյակում, տանելով նաև բուժիչ բույսերի, կենդանիների վարքագծի և էկոլոգիական պրակտիկայի մասին նրանց ունեցած անփոխարինելի գիտելիքները [Who Are Aboriginal Australians – and Why Are They Still Fighting for Recognition?, 2023]: Նույն Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց Անպետ» գրքում հիշատակվում են հայ բուսաբանական, կենսաբանական և բժշկագիտական հազարավոր տերմիններ, գիտելիքի շատեմարան, որն այսօր կարող է միանգամայն այլ տեսք տալ հայ բժշկագիտությանը [Անգիտաց Անպետ, n.d.): Այլասկայի Էյակ լեզուն մեռավ 2008 թվականին իր վերջին խոսողի հետ միասին [Staff, 2008]:

Լեզվական ինքնության կորստի հիմնական պատճառներից է նաև տեղաբնիկ համայնքների շրջանում ձևավորված թերաթեքության զգացումը, որը հաճախ առաջանում է արտաքին ազդեցությունների հետևանքով: Գաղութային կամ գերիշխող մշակույթների և լեզուների ճնշման պայմաններում տեղաբնիկները հաճախ անտեսում են իրենց հոգևոր և մշակութային արժեքները: Մա նպաստում է ինքնագնահատականի անկմանը, ինչը կարող է խոր ազդեցություն ունենալ ոչ միայն անհատների հոգեկան առողջության վրա, այլև համայնքի ընդհանուր համախմբվածության և գոյատևման վրա: Թուլացած ինքնությունը, իր հերթին, նվազեցնում է լեզվի գործնական կիրառությունը և նպաստում է դրա աստիճանական մոռացմանը:

Գաղութային լեզվի պարտադրումը սոցիալական տարբեր ոլորտներում, ներառյալ կրթությունը, առողջապահությունը և արդարադատությունը, տեղաբնիկների համար հաճախ ստեղծում է անհաղթահարելի խոչընդոտներ: Լեզվական խտրականության հետևանքով ձևավորվող անհավասարությունը և մարզինալացումը ստիպում են տեղաբնիկներին ընդունել գերիշխող լեզուն՝ որպես սոցիալական և տնտեսական ներառման միջոց: Այս գործընթացը, սակայն, հաճախ ուղեկցվում է տեղաբնիկ լեզուների և դրանց հիման վրա կառուցված մշակութային ինքնության կորստով: Լեզվական ինքնության հետ մեկտեղ մարում են նաև դրան առնչվող սոցիալական և մշակութային միավորումները, որոնք ապահովում էին համայնքի կայունությունն ու զարգացումը:

Բացի լեզվական ճնշումներից, տեղահանությունները և միգրացիան ևս նշանակալի ազդեցություն են թողնում լեզվական ինքնության վրա: Հակամարտությունների, շրջակա միջավայրի փոփոխությունների, տնտեսական ճգնաժամերի կամ հոգևոր և մշակութային ստորադասման հետևանքով տեղաբնիկ համայնքները հաճախ ենթարկվում են պարտադիր տեղահանության: Նման պայմաններում լեզվական համայնքները քայքայվում են, իսկ դրանց անդամները կորցնում են լեզվական հաղորդակցման բնական միջավայրը: Մա լեզուն արմատախիլ է անում և խաթարում է դրա բնական զարգացման շղթան, հատկապես, երիտասարդ սերնդի համար:

Տեղահանության և արտագաղթի արդյունքում տեղաբնիկների լեզվի կորուստը հատկապես արագանում է, քանի որ նոր միջավայրում տեղաբնիկ լեզուների կրողները ստիպված են լինում հրաժարվել իրենց լեզվից, նոր միջավայրին ինտեգրվելու անհրաժեշտության պատճառով: Նման իրավիճակները ոչ միայն կրճատում են լեզվական բազմազանությունը, այլև խաթարում են լեզվակիրների մշակութային և հոգևոր ինքնությունը, որը սերտորեն կապված է իրենց լեզվական ժառանգության հետ:

Արդյունքում, լեզվական ինքնության կորուստը բերում է ոչ միայն լեզվաբանական հետևանքների, այլև լայնածավալ սոցիալական և հոգեբանական խնդիրների: Այս երևույթը լուրջ ազդեցություն է թողնում համայնքների կայունության վրա, խաթարում է նրանց համախմբվածությունը և նվազեցնում է նրանց կենսունակությունը: Ուստի, լեզվական ինքնության պաշտպանությունը և վերականգնումը պահանջում են ոչ միայն գիտակցված ջանքեր տեղաբնիկների կողմից, այլև աջակցություն պետական կառույցներից, հասարակական կազմակերպություններից և միջազգային հանրությունից՝ ապահովելու լեզվի, մշակութային և բնապահպանական կայունությունը:

Հայտնի է, որ քննադատական մտածողությունը թե՛ գիտական մտածողության և թե՛ սուբյեկտայնության առաջնային առանձնահատկություններից է: Այդ հարթության վրա գիտական մտքին լեզվական հաղորդակցության միջոցի պարտադրելը ինքնության կամ

սուբյեկտայնության անարյուն վերացման և շահառու համայնքին միաձուլելու «հումանիստական» զենքերից է: Գիտական միտքը չի գաղութացվում. այն կա՛մ արտագաղթում է դեպի իր գոյության համար նպաստավոր միջավայր, և այդ երևույթը հայտնի է «ուղեղների արտահոսք» անվամբ, կամ այն պետք է ճահճանա և ապակազմավորվ անբարենպաստ հանգամանքներում. այդ հանգամանքների մասին այստեղ չի խոսվի, սակայն պետք է շեշտել, որ գիտական մտքի մարման հետ տեղաբնիկ լեզուն ևս կորցնում է գիտության լեզվի իր կարևոր՝ քննադատական դիմագիծը: Ուղեղների արտահոսքն արդեն սուբյեկտայնության կորստի ուղղակի ցուցանիշ է: Գիտության բնագավառում ևս, ինչպես գաղութացման մյուս հարթություններում, ձեզանից տանում են հումք, տվյալ դեպքում մտածող ուղեղներ, վերադարձնելով երկրորդային մշակման արդյունքներ: Սուբյեկտային՝ քննադատ մտածողությունն ունեցող մտքի օտարումից բացի, նվազում է տեղական գիտալեզվի օգտագործման ծավալը, դրա նվազմանը զուգահեռ, փոքրանում է բնիկ ժողովրդի գիտամշակութային հիշողության ծավալները: Մա միանգամայն չափելի մեծություն է, այս դրույթը կարելի է փաստել գիտնականների գրադարանային և առցանց մասնագիտական գործունեության վիճակագրությամբ: Այսօր մեր մասնագետները շատ քիչ գիտեն և չեն կարողում Անհաղթի և Երվանդ Ֆրանգյանի փիլիսոփայական, Շիրակացու աստղագիտական, Ամիրդովլաթ Ամասիացու, Միս. Հերացու բժշկագիտական աշխատությունները, գրեթե ոչ մի կերպ չեն լուսաբանվում մեր ժամանակակից գիտնականների նվաճումները: Մինչդեռ դա ոչ միայն այն նոր բովանդակությունն է, որ նրանք նվիրել են գիտության աշխարհին, այլև ճանաչողության կերպը, այն, ինչն այսօր կոչվում է լեզվական մտածողություն: Եվ ճանաչողության հայ մշակութային կերպի մեջ բանալու դերը լեզվինն է:

Չնայած համարվում է, որ նախորդ գիտելիքի՝ հիշողության փոխանցվող ծավալների փոքրացումը նոր իրականությունն ընդունելու և շարունակելու նախապայման է, պետք է չմոռանալ, որ անձի ինքնագիտակցությունը (3 տարեկանից սկսած), և համահավաք ինքնության գիտակցությունը՝ դրա առաջին խորհրդանիշներից և իրադարձություններից սկսած, հենված է հենց հիշողության և պահպանվող գործելակերպի՝ ավանդույթների վրա. ոչ միայն կենցաղային, այլև մտավոր, աշխարհայացքային: Մարդու գիտական մտածողության զարգացումը ոչ միայն կարիք ունի լավ սկզբի, այլև հետևողական շարունակականության, մինչև համալսարան և ազատ ու մրցակցային գիտական գործունեություն: Այն ինքնության և աշխարհի լեզվական պատկերի ձևավորման հիմքում է ընկած, նախ, որպես ռացիոնալ մտածողություն և զուգակցում է մարդու մեջ նշանային ու զգայաշարժողական, նաև հուզագնահատողական գործելակերպերով, որոնցից են, օրինակ, շախմատային, մաթեմատիկական, գունային, երաժշտական կամ սպորտային մտածողության տեսակները: Դրանք բոլորը գիտակցության մեջ ամրակայվում են, փոխանցվում ու տարածվում են բնական լեզվի միջոցներով: Մարդու աշխարհում, հատկապես գիտության մեջ, չկա ոչինչ, որ չլինի բնական լեզվում: Գիտական մտածողության բոլոր սկզբունքներն, ի վերջո, լեզվական մտածողության տիրույթում են:

Տեղաբնիկ լեզվի կորուստի կամ մարզինալացման առաջին նշանները գիտական և տեխնոլոգիական լեզվի նորացման բացակայությունն է, այսինքն երբ կտրվում է տեղական գիտության զարգացման թելը. սա հաջորդ փուլում հանգեցնում է ավանդական գիտելիքների՝ սովորույթների, պատմությունների, տների, ծեսերի և համակարգերի քայքայմանը, որոնք փոխանցվել են սերունդների միջով: Այս ընթացքն ավարտվում է տվյալ լեզվակիր միավորի կառուցվածքային սուբյեկտայնության վերացումով: Բնիկ լեզուների կորուստը համաշխարհային երևույթ է, որն ունի հեռահար հետևանքներ ոչ միայն խոսողների և նրանց համայնքների, այլև մարդկության մշակութային բազմազանության և գիտելիքների համար: ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի վտանգված լեզուների ատլասը» դասակարգում է լեզուներն ըստ վտանգի աստիճանի՝ «խոցելիից» մինչև «վերացած»: 2023 թվականի ապրիլի տվյալներով՝ աշխարհի մոտ 7000 լեզուների առնվազն 43%-ը վտանգված է [Visualizing All the Global Endangered Languages, n.d.]: Այդ լեզուների հետ միասին կորչում է տեղորոշ մտածողության բնորոշ բազմազանությունը:

Լեզվի վերակենդանացման հավանական ուղղություններն ու մարտահրավերները

Գիտական մտքի ազատագրումն սկսվում է լեզվի ազատագրումից, որ նշանակում է դրա կիրառության ոլորտների միջավայրի ժամանակատարածքային և ռեսուրսային ապահովում: Մասնաճեղատ է ոչ միայն փոքրաքանակ լեզուների պահպանության, այլև երկրագնդի վրա առողջ բազմազանության պահպանման համար. տեղաբնիկ քննադատական և գիտական մտքին և տեղական լեզուներին տալ իրենց անհրաժեշտ ազատությունը: Լեզուների վերակենդանացման ծրագրերը նախ ուղղված են ամբողջ աշխարհում լեզվի կորստի և մշակութային էրոզիայի կամ լեզվամշակութային բազմազանության կորստի դեմ: Քանի որ լեզուն և գիտությունը ցանկացած սուբյեկտի, նաև պետության մտածելու և հաղորդակցվելու առանցքներն են, պետականության հաստատման առաջին քայլերից մեկը գիտական սուբյեկտայնության ամրապնդումն է: Մեփական փիլիսոփայական աշխարհայացք և բազմազանության մեթոդաբանություն ունենալը. բազում օրինակներ են հայտնի այն մասին, թե ինչպես են հենց այդ մտադրությամբ գիտնականները, և ոչ միայն նրանք, գրել ֆունդամենտալ համարվող երկեր:

Աշխարհի լեզվական կամ լեզվամտածողական բազմազանությունը ճանաչելու և պաշտպանելու համար անհրաժեշտ է միավորել պետությունների, համայնքների և միջազգային կազմակերպությունների ջանքերը: Պետք է հարգել տեղական լեզուների գերակայությունը, և ապահովել լեզվամտածողական բազմազանությունը՝ որպես մարդու հիմնարար իրավունք: Այդ մասին հայտարարություններ են տարածում գնալով ավելի ու ավելի շատ երկրներ՝ Սկանդինավիայում, հեռավոր արևելքում, Հնդկաստանում և Հարավային Ամերիկայում:

Թվայնացումը գիտության լեզվի պահպանման և վերակենդանացման հնարավորություն է ընձեռում, եթե փոքրաքանակ լեզուները կարողանան, այն նպատակային կերպով օգտագործել: Թվային հարթակներն ու գործիքները, այդ թվում՝ առաջնային և թարգմանական լեզվական կորպուսները, մեքենայական թարգմանության համակարգերը, առցանց կրթական ռեսուրսները, կարող են նպաստել գիտական տվյալների հասանելիության տարածմանը, միաժամանակ ապահովելով տեղական լեզուների տարածմանը: Դրանք նոր հնարավորություններ են բացում գիտության մեջ տեղաբնիկ լեզվի պահպանության համար: Գիտական հայերենի պաշտպանության համար պետք է հատուկ կրթական ծրագրեր մշակել, այն մատչելի և լայնորեն կիրառելի դարձնելու համար: Մրան նպաստելու համար պետք է ստեղծվեն հատուկ ուսումնական նյութեր, վաղ տարիքից երեխաներին պետք է տրամադրվեն գիտական մտածողության լեզվատրամաբանական հիմունքները, նրանց հնարավորություն տալով ստեղծագործաբար զարգացնելու իրենց քննադատական լեզվամտածողության հմտությունները:

Գիտության լեզվի իրավունքները պետք է պաշտպանվեն օրենսդրական կարգավորումներով: Այս ուղղությամբ կարևոր քայլերից մեկը պաշտոնական գիտական հաղորդակցության տերմինաբանական և տարրական գիտելիքի կազմակերպման տեղական ստանդարտների մշակումն է: Պետությունները և միջազգային կազմակերպությունները պետք է համաձայնագրեր կնքեն, մասնավորապես, սոցիալ-հումանիտար գիտությունների բնագավառում ևս, ինչպես բնական և մաթեմատիկական գիտություններում է, սահմանել համընդհանուր գիտական լեզվի նորմեր, և տարանջատեն տեղաբնիկ նշանակության գիտելիքի համակարգերն ու դրանց օգտագործման իրավունքների պաշտպանությունը:

Որակյալ թարգմանությունը հատկապես կարևոր է, երբ տեղական մշակույթի և ավանդական գիտելիքների վրա հիմնված գաղափարները պետք է ներկայացվեն այլ լեզուներով: Այլ լեզվի թարգմանած տեղաբնիկ տեղաբնակ գիտելիքը սովորաբար դուրս է մղվում թարգմանվածքից, որը կորցնում է այն եզակի լեզվամշակութային շեշտադրումները, որոնք բնորոշ են տեղական լեզվամտածողությանը և մշակութային միջավայրին: Թարգմանության որակից է կախված, թե որքանով կապահովվի այդ արժեքների պահպանությունն ու ինքնության պաշտպանությունը: Այսպիսի մարտահրավերների հաղթահարումը և տեղական լեզվի գիտականության պահպանությունը կախված է թարգմանչական մասնագիտության արդիականացումից:

Մշակութային գիտելիքի հանրահասանելիությունն ապահովելու համար գիտական արտադրանքի երկկողմ որակյալ թարգմանությունը գիտական բազմալեզվությանը նպաստող գործոն է: Տեսականորեն, սա մի կողմից կարող է նվազեցնել աշխարհի տարբեր մասերում համընդհանուր գիտական անհավասարությունը: Մյուս կողմից, գիտական խոսույթի թարգմանությունը կնպաստի թե՛ սուբյեկտայնության ամրապնդմանը և թե՛ տարբեր լեզվամշակութային համայնքների միջև փոխադարձ հարգանքին ու համագործակցությանը: Այսպիսով, թարգմանությունը և թվայնացումը նպաստում են այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ գիտությունը չի սահմանափակվում մի քանի գերիշխող լեզվամտածական մոդելներով, այլ պահպանում է որոշակի բազմազանություն՝ տեղերում չկորցնելով ինքնությունն ու լեզվամտածական ազատությունը:

Խթանելով մայրենիի օգտագործումը գիտական հաղորդակցության մեջ՝ թարգմանությունը կարող է դիմակայել ձուլմանը և սփյուռքի համայնքներում մշակութային ինքնիշխանության հոգևոր, ապա նաև տնտեսական ազատությունների տարածք դառնալ: Այս կարգի պատմական փորձ մենք ունենք: Հայերենի լեզվաոճական բազմազանությունը կարելի է դիտարկել որպես մարտահրավեր կամ որպես հնարավորություն, եթե մենք կառուցողական գերակայություններ ունենք: Մեր լեզուն ունի տարբերակներ և բարբառներ, որոնք կարող են թարգմանչին երկրնտրանքի առջև դնել: Սակայն այս կարգի մարտահրավերները կարող են լուծվել և դառնալ հոգևոր տարածքի առավելություններ, եթե տեղերում համայնքները թարգմանչական նախաձեռնություն և տեխնոլոգիաների ներդրումներ իրականացնեն: Իհարկե, թե մեկ և թե մյուս կարգի ռեսուրսների սահմանափակումները մարտահրավերներ են, քանի որ որակյալ թարգմանությունը պահանջում է ռեսուրսներ, ներառյալ ֆինանսավորում, վերապատրաստված թարգմանիչներ և հաստատված համագործակցություն գիտական և թարգմանչական կազմակերպությունների միջև: Համապատասխան ռեսուրսների ապահովումը էական նշանակություն ունի թարգմանչական ջանքերի հաջողության համար: Եզրափակելով այս բաժինը, հաստատենք, որ գիտության թարգմանությունը հզոր գործիք է գիտական գաղութացման դեմ, այն կհզորացնի գիտական հայոց լեզուն և միտքը, կվերականգնի և իրավահավասար հիմունքներով կշրջանառի ավանդաբար կուտակված գիտելիքը, զարգացնելով ժողովրդի լեզվական իրազեկությունը և խթանելով նրա մշակութային ինքնիշխանությունը: Գիտական դիսկուրսի մեջ տեղաբաշխելով բնիկ լեզուներն ու հեռանկարները՝ թարգմանությունը կարող է նպաստել գիտելիքի արտադրության և տարածման ավելի ընդգրկուն և արդար ձևերին:

Ամփոփում և անելիքներ

Հայոց գիտության լեզվի և հաղորդակցության պաշտպանությունն ու դրանում հայերենի վտանգված ճյուղի վերակենդանացումը, որոշիչ նշանակություն ունեն հայ միասնական գիտական համայնքի զարգացման համար՝ հատկապես գլոբալ մարտահրավերների, տեխնոլոգիական փոփոխությունների և միջազգայնացման այս ժամանակաշրջանում: Այսօր անհրաժեշտ է, որ տեղական գիտական մտածողությունն ու լեզուն համապատասխանի գիտական հաղորդակցության զարգացման համաշխարհային պահանջներին, միաժամանակ շարունակելով մնալ կենսունակ՝ երկրի ինքնիշխանությունը, անվտանգությունը և պետականությունը հաստատող իր դերով: Գիտության լեզուն հաղորդակցումը ոչ միայն նպաստում են երկրի տեխնոլոգիական զարգացմանն ու կենսական վտանգները հաղթահարելուն, այլ նաև ապահովում են մեր պետության և սփյուռքի հայության միասնական ինքնության և ինքնագիտակցության շարունակականությունը: Հողվածը հիմնավորում է, որ պետության գիտական միտքը պետք է զարգանա պետական լեզվով, որը երկրի ինքնիշխան ապագայի երաշխավորն է: Գիտական լեզուն և հաղորդակցությունը, հատկապես սոցիալ-հումանիտար ոլորտում, կարևոր նշանակություն նաև մշակութային պատերազմում, որտեղ այն կարևորագույն մտավոր և հոգևոր զենք է: Ահա, թե ինչու լեզվի ներքին և արտաքին քաղաքականությունը պետք է նպաստի գիտության զարգացմանը՝ ստեղծելով ռեսուրսներ և

օրենսդրական կարգավորումներ՝ համաշխարհային գիտական տարածքում հայ մտքի հայերեն և բազմալեզու ներկայացվածության համար:

Հետևյալ ուղղությունները նախագծում են այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկել պետական և ակադեմիական ջանքերի ու ռեսուրսների միավորմամբ:

Թվայնացումը պետք է լինի հայալեզու ժառանգության պահպանման առաջնահերթությունը: Այստեղ պահանջվում են նորագույն թվային գործիքներ՝ լեզվական կորպուսներ, մարդակենտրոն մեքենայական թարգմանություն և արհեստական մտքի գործիքներ, որոնք կօգնեն հայալեզու գիտական բովանդակության տարածմանը գլոբալ ասպարեզում: Կառավարության և գիտական հաստատությունների համագործակցությունը պետք է առաջ մղի այն դրույթը, որով հայերենը գիտական երկխոսության մաս կկազմի միջազգային հրապարակումներում: Համալսարաններում և կրթական հաստատություններում պետք է ներդրվեն և արդիականացվեն գիտական հաղորդակցման հայալեզու ծրագրեր՝ նոր սերնդի լեզվական հմտություններն ու բազմալեզու հաղորդակցության պատրաստվածությունը բարձրացնելու համար:

Մոցիալ-հումանիտար, մարդաբանական գիտության բնագավառում ետ է մնում գիտական տերմինաբանական ստանդարտների մշակումը: Գիտական հաղորդակցման համար հայերենը պետք է ունենա միջազգային չափանիշներին համապատասխան, միաժամանակ ներքին լեզվամշակութային գիտելիքը խնամքով արտացոլող գիտական տերմինաբանական բառարաններ ու բառաշտեմարաններ: Պատկերն ավելի է բարդանում, քանի որ արևելահայերեն և արևմտահայերեն խոսվածքների խճապատկերն այսօր իր հերթին, պահանջում է նոր ուսումնասիրություններ նոր լեզվական ստանդարտի մշակման ուղղությամբ: Սա կարող է իրականանալ թարգմանչական նախագծերի համահայկական և պետական միասնական ծրագրի շրջանակներում: Իսկ այն դժվար է պատկերացնել առանց միջմշակութային համագործակցության՝ տեղական և միջազգային գիտական համայնքների միջև:

Նախագծված գաղափարները պետք է ծառայեն միջազգային լեզվական բազմազանությանը և աշխարհի տարբեր ծայրերում հայ գիտական մտքի պահպանությանը, որով և կպահպանվի Հայաստանի լեզվամտածողական ինքնությունը և ինքնիշխանությունը, հայ գիտական մտքի հետագա կենտրոնացումը մեր պետական լեզվով: Սա կարևոր դիրքորոշում է միջազգային գիտական դիսկուրսում հայերենի որպես ուրույն մշակույթ և գիտական միտք ունեցող լեզվի դիրքերի ամրապնդման ուղղությամբ:

SUMMARY

Global challenges require generating a unified terminological system of scientific communication. This is necessary for several reasons: to solve problems of quality and credibility, norms and standardization, interdisciplinary regulations and financing, information and authorship security. The same global challenges require ensuring natural diversity in science, which is possible if the local scientific thinking and the local languages are preserved.

This conceptual paper puts forward the idea that the functions of scientific communication are significantly different from the functions of science itself, therefore it deserves separate attention. Scientific thinking and language ensure the continuity of collective identity and self-awareness, its international representation and natural ecology of communication, the values and their security. Therefore, a country's scientific thought should develop in its people's language. In the internal environment, language serves the cultural self-knowledge of citizens, granting them a dignified identity, which in turn forms moral and ethical immunity and public consent. In the field of external communication, it ensures the presentation of unique knowledge content and the expansion of the space of subjectivity since subjective meanings create mental and physical spaces, which are filled and expanded along with the growth of meanings, needs, and demands. The task of a stable internal and external language policy is to organize and implement conditions conducive to the development of science in the native language and its multilingual dissemination, environment, resources and regulations, to ensure the development of a unique, indigenous language of science, and its multilingual communication in global platforms and initiatives.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ammon, Ul. (ed.), *The dominance of English as a language of science: Effects on other languages and language communities*, Berlin & New York, Mouton de Gruyter, 2001. Pp. xiii + 478, DOI: 10.1017/S0047404502264052.
2. *An Ecological Approach to Indigenous Language Renewal*, (n.d.). Retrieved November 30, 2024, [Electronic Resource] URL: https://jan.ucc.nau.edu/~jar/TIL_25.html. 30.11 2024.
3. Belmihoub, K. English in a multilingual Algeria // *World Englishes*, 2018, 37(2), pp. 207-227. <https://doi.org/10.1111/weng.12294>.
4. Crystal, D. *English as a global language* (2nd ed), Cambridge University Press, 2003, 229 p.
5. Fessler, D., & Machery, E. Culture and Cognition // *The Oxford Handbook of Philosophy of Cognitive Science*, 2012, pp. 503-527. <https://doi.org/10.1093/oxfordhb/9780195309799.013.0021>.
6. Giles, H., & Johnson, P. Ethnolinguistic identity theory: A social psychological approach to language maintenance *Ijssl*, 1987 (68), 69-100, <https://doi.org/10.1515/ijssl.1987.68.69>.
7. Joe Pierce. Culture: a Collection of Fuzzy Sets. *Human Organization* // *Journal of the Society for Applied Anthropology*, 1977, 36(2), pp. 197-200.
8. Kayigema, J. L., & Mutasa, D. E. The Dynamism of English as a Global Language in the Pas-Genocide Rwanda // *Indonesian EFL Journal*, 2017, 3(1), 101. [Electronic Resource] URL: <https://doi.org/10.25134/ieflj.v3i1.659>. 30.11 2024.
9. Kretzschmar, W. A., & Meyer, C. F. The idea of Standard American English // R. Hickey (Ed.), *Standards of English*, 1st ed., pp. 139-158, Cambridge University Press 2012, <https://doi.org/10.1017/CBO9781139023832.008>.
10. Nuyts, J. *Epistemic Modality, Language, and Conceptualization: A cognitive-pragmatic perspective*, Vol. 5. John Benjamins Publishing Company, 2001, <https://doi.org/10.1075/hcp.5>.
11. Salomone, R. How English Took Over the World. *The Millions*, 2024, February 27, [Electronic Resource] URL: <https://themillions.com/2024/02/how-english-language-took-over-the-world.html>. 30.11 2024.
12. Scientific publishing has a language problem, *Nature Human Behaviour*, 2012, 7 (7), pp. 1019-1020. <https://doi.org/10.1038/s41562-023-01679-6>.
13. Staff, A. Eyak language dies with its last speaker, *Alaska Public Media* 2008, January 23 [Electronic Resource] URL: <https://alaskapublic.org/2008/01/22/eyak-language-dies-with-its-last-speaker/>. 30.11 2024.
14. *Visualizing all the Global Endangered Languages*, (n.d.), [Electronic Resource] URL: <https://www.visualcapitalist.com/cp/all-the-worlds-endangered-languages-by-country/> 30.11 2024.
15. Who are Aboriginal – Australians and why are they still fighting for recognition? *Culture*. [Electronic Resource] URL: <https://www.nationalgeographic.com/culture/article/aboriginal-australians>, 25.10. 2023.
16. Անգլիտաց Անպէտ, Նախաբան հեղինակին. (n.d.). [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://digilib.aa.am/book/56/56/287/%D4%B1%D5%B6%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D6%81%20%D4%B1%D5%B6%D5%BA%D5%A7%D5%BF>, 30.11.2024. 30.11 2024.
17. Հովհաննիսյան, Ղազարյան, Բար. Իմաստ և նշանակություն // *Լեզու և Լեզվաբանություն*, Երևան, ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, 2003, № 1, էջ 27-33: